ՕԾՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 20-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օծվեց Երևանի Հարավ-արևմտյան թաղամասի նորակառույց Ս. Երրորդություն եկեղեցին: 2001 թ. հունիսի 7-ին Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվել էր եկեղեցու հիմնարկեքի, իսկ 2004 թ. նոյեմբերի 9-ին՝ խաչերի օծման արարողությունները: Եկեղեցին կառուցվել է ազգային բարերար տիկ. Լուիզ Սիմոն Մանուկյանի ազնիվ բարերարությամբ: Նորակառույց եկեղեցու ճարտարապետն է լուսահոգի Բաղդասար Արզումանյանը:

«Հրաշափառ»-ի երգեցողության ներքո, եկեղեցականների հանդիսավոր թափորի ուղեկցությամբ, իր օրհնությունը բաշխելով հավատացյալ ժողովրդին, Նորին Սրբությունը մուտք գործեց նորակառույց տաճար: Եպիսկոպոսաց դասի հետ մեկտեղ Հայոց Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը, ապա Սրբազաններն օծեցին եկեղեցու Ս. Խորանի սյուները և Մկրտության ավազանը: Եկեղեցու մյուս սյուները դեռ նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, օծել էր Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը՝ թեմի հոգևոր դասի հետ մեկտեղ:

Հավարտ արարողության խոսքերում հավատացյալներին դիմեց Նավասարդ Սրբազանը. «Եկեղեցի կառուցելը աստվածահաճո և սրբազան, նվիրական գործ է, բայց եկեղեցին պահելը ամենքիդ գործն է: Այս եկեղեցին պիտի լինի վկայությունը մեր երկհազարամյա հավատքի զորության: Եկեղեցին պահելով՝ մենք ինքներս եկեղեցի ենք դառնում, և այդ եկեղեցու կենդանարար զորությունը կապված է մեր անսասան հավատքի հետ: Մեր Վեհափառ Հայրապետը սկսել է աննախընթաց եկեղեցաշինության մի գործընթաց, որով ամեն մեկ վայրում աստվածային ներշնչանքով աղոթքի տուն է կառուցվում, որպեսզի երկինքը խոսեցնենք մեր մեջ այդ աղոթատներում և մեր աղոթքների մեջ ևս հիշենք մեր Հայրապետին»,- ասաց Սրբազանը՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունը բարեպաշտ ժողովրդին:

«Գոհաբանական աղոթքը մեր շուրթերին Մենք եկել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնից՝ օրհնելու ձեր հոգևոր ուրախությունը, որ ապրում եք այս պահին սրբազան այս տաճարի օծման արարողությամբ: Երկար տարիներ, սիրելի բարեպաշտ Մեր զավակներ, դուք չունեիք հնարավորությունը ձեր աղոթքի տունն ունենալու Հարավ-արևմտյան այս թաղամասում: Այսօր, գոհություն և փառք Աստուծո, շնորհիվ ձեր զորեղ հավատքի Աստված պարգևեց մեզ այս շնորհը, այստեղ դեպի երկինք վեր բարձրացնելու նորակառույց Ս. Երրորդություն եկեղեցին:

...Եվ այսօր լուսավոր տաճարն իր դռները բացել է Մեր հավատավոր զավակաց առջև, ովքեր վստահաբար բանուկ պիտի պահեն այս եկեղեցու ճանապարհը, պիտի գան այստեղ հաղորդվելու նվիրական այս Ս. Սեղանին՝ մեր Տիրոջ մարմնով ու արյամբ: Պիտի գան իրենց հավատքն ու կամքը զորացնելու, որպես-

գի օրհնությունն Աստուծո հեղվի հայոց կյանքի վրա, լցվի մեր գավակաց ընդունելական հարկերից ներս: Այսրեղ պիտի գան Մեր գավակները մկրտվելու և ընդունելու Քրիստոսադրոշմ կնիքը հայկականության և իրենց գավակներին Տիրոջ պատվիրանների ու պատգամների մեջ առաջնորդելու, որպեսզի նրանք ապրեն որպես աստվանավոր գավակները մեր հայրերի ու մեր ազգի և կառուցեն աստվածային սիրով ու նախանձախնդրությամբ մեր հայրենի երկիրը: Այսրեղ պիտի գան մեր ժողովրդի գավակները ընդանեկան պատակադրության ուխտը կարդալու, ամուր ընդանիք հաստատելու սիրո հիմքերի վրա, որով և ամուր պիտի լինի Հայոց պետությունն ու պետականությունը:

...Մենք հավատում ենք, որ շնորհիվ մեր զորեղ հավատքի, դեպի մեր հայրերի նվիրական սուրբ հավատքն ունեցած հավատարմությամբ մենք պիտի կարողանանք վերստին 1700-ամյա քրիստոնեական մեր հավատքը պտղաբեր դարձնել հայոց կյանքում: Պիտի կարողանանք մեր հավատքի ամրության մեջ հարազատ գավակները կոչվել մեր հայրերի: Մենք հավատում ենք, որ մեր հավատքը, աստվածասիրությունը, մեր հայրենասիրությունը պիտի գան մեզ զորացնելու, որ ի վիճակի լինենք հեռու վանել մեզանից բոլոր այն օտար, խորթ երևույթները, որոնք որ վտանգում են մեր հայրենի կյանքը և մեր հոգևոր կյանքը»,-նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը հայտնեց եկեղեցու ազնիվ բարերարին՝ տիկին Լուիզ Սիմոն Մանուկյանին, ում առատաձեռն և ազնվահոգի հանձնառության շնորհիվ հնարավոր եղավ Ս. եկեղեցու կառուցումը: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հայրենի պետությանը՝ ի դեմս օծմանը ներկա Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի՝ եկեղեցաշինության նվիրական գործին մշտապես աջակցելու համար: Վեհափառ Հայրապետը իր մասնավոր գնահատանքը հայտնեց Նավասարդ Սրբազանին և թեմի հոգևոր սպասավորներին: Նորին Սրբությունը իր գնահատանքը բերեց եկեղեցու շինարարներին՝ գլխավորությամբ Ա. Եղիկյանի, ինչպես նաև Մալաթիա-Սեբաստիա համայնքի թաղապետ Ա. Գրիգորյանին՝ եկեղեցու շինարարական ընթացքին մշտական ուշադրություն ցուցաբերելու համար:

Այնուհետև Ս. Պատարագ մատուցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Հավարտ Պատարագի մասնավոր հոգեհանգստյան արարողություն կատարվեց բարերարի լուսահոգի ծնողների՝ Ալեք և Մարի Մանուկյանների, ինչպես նաև եկեղեցու ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի հոգիների հանգստության համար:

Օծման արարողությանը ներկա էին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս. Խաչատրյանը, Մայր Աթոռի միաբաններ, եկեղեցու խորանի Աստվածամոր պատկերի նկարիչ Վարուժան Վարդանյանը, հրավիրյալներ և բազմաթիվ հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՌԱՆՁՆԱԿԱՆ

ՆՈՐԱՕԾ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ